## 24. ՀՈՎՈՆ

Կէլնի, կէլնի մեյ խապ թաքավոր:

Էսա թաքավորին կէլնի մեյ խապ էլ խորոտ սիրուն ախչիկ, էլ ուրիշ զապ չէղնի:

Էսա թաքավորի ախչկան շատ տեղից ուզողներ կուգյան, համան թաքավոր մեկին էլ խոսկ չի տա:

Մեկ օր մեյ խապ պառավ կնիյմ կուգյա թաքավորի մոտ, մեյ խապ էլ խորոտ շինուկ թեփսիմ խետ: Կուգյա թաքավորի դռան վերեն կկայնի:

Նազր-վազր որ կէլնի տուս, կտիսնա էսա պառավ կնգյան, կասի. - Պառավ, ի՞նչ կուզես:

Պառավն ի, կասի. - Կուզեմ մեյ խապ մեր թաքավոր տիսնամ, ինոր էսա թեվսին պիտի տամ ափիյա:

Նազր-վազրնվի, կտիսնա որ խեղճ պառավ կնիկ ի, կասի. խոր խաթր չկոտրենքյ, ամր կանի տռնապանին, որ էսա կնգյան թողնի, էրթա մոտ թաքավոր:

Պառավն ի, կէլնի կէրթա վեր, մոտ թաքավոր, գյլեոխ կուտա կկայնի մեչ տռան:

Թաքավորն ի, կդառնա կտիսնա էսա պառվուն, կասի. - Քյո դարտ ի՞նչ ի, պառավ, որ իկեր ես:

Էսա պառավն ի, քիչմ կթլլթլնգյա, սորա կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես իկեր եմ քյո մոտ, իսկի մեյ պան էլ չեմ ուզե, ես մենակ քյո ջանի սաղութեն կուզիմ, համան քյեզնից ի՞նչ պախիմ, իմ դարտ էն ի, որ քյո ախչիկ տաս իմ լաճուն, ես իկեր եմ, որ քյո ախչիկ ուզեմ իմ լաճուն: Էսա յի իմ դարտ:

Թաքավորն ի, մեյ խապ կիրիշկա էսա պառվու վերագյլեոխ, կտիսնա որ ֆուկարի մեյն ի, մեյ խապ ինքյ ուր կծըծղա, կդառնա էսա պառվուն կասի. - Խա, պառավ, ինչի՞ չէ, ես իմ ախչիկ կուտամ քյո լաճուն, ինորից ավել մարթու՞ պիտի տամ:

Պառավն ի, որ կտիսնա էսա թաքավոր խոսկ տվեց. գյլեոխ կուտւս, կէրթա որ դռան իտվից թեփսին պիրի տա թաքավորին ափիյա:

Թաքավոր կիտի, թե պառավ կէրթա, կկանչի, կասի. - Պառավ, արե տիսնամ, ալա մ'էրթա, արե տիսնամ խենքյ քյո տղեն ի՞նչ սանձհաթ ունի:

Պառավն ի, կտառնա կուգյա թեփսին էլ ծեռ կտնի թաքավորի առաճ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, էսա թեփսին որ կա, իմ տղեն ի շինե, իմ տղեն կազանչի յի, ըսկուն ոսկի բլայզյուկմ ունի ծեռ, որ իսկի էլ նեղութեն չեն քաշե, իմ տղեն գյեռ էսա արհեստ ունի:

Թաքավորն ի, կասի. - Շատ աղեկ, պառավ, ես էլ իմ ախչիկ կուտամ ինոր, քանի որ կասես՝ ոսկի բլայզյուկ սանահաթ ունի ծեռ:

Թաքավորն ի, կասի. - Աղեկ, պառավ, տյու կնա, ես էլ մեյ խապ կմտածեմ չուր տասնըխինգյ օր, թող տասնըխինգյ օրից սորա քյո լաճ գյա, ինոր ջյույապ կուտամ: Հազր էնգյախ էլ մեր տեսայուն կտիսնանք:

Պառավն ի, էտա թեփսին կուտա թաքավորին ափիյա, ինքյն էլ կտառնա կուգյա տուն, հալ-հեքյաթ կասի ուր լաճուն:

Էսա լաճն ի, որ կտիսնա էսա պան, էլ ոտկեր գյետին չի առնե, ուրախութնե մոր ճակատ կպռնի կպագյի:

Մի քյանի օրից սորա մեյ խապ էլ մաղ գյոռծող մեյ խապ սրմա մազով մաղ կշինի, կուտա ուր մոր, կասի. «Տար տուր թաքավորին ափիյա, համդա ինոր ախչիկ ուզի զիկ, տիսնանքյ խենքյ ի՞նչ կասի. գյեռ ասա՝ իմ լաճ ըսկնա սանահաթ ունի»:

Էսա լաճու մերն ի, կառնի էտա սրմա թելից շինված մաղ, կէրթա թաքավորի քեոշկ-սարեն: Էլմ'էլ սատրազամ սարից կէլնի տուս, կտիսնա էսա պառվուն վեր դռան, կասի. - Ի՞նչ կուզես, պառավ:

Պառավն ի, կխանի էտա մաղ սատրազամին շանց կուտա, կասի. - Էսա պիտի տանեմ տամ մեր թաքավորին ափիյա, մեյ խապ էլ խնդիրքյ ունեմ, պիտի ասեմ ինոր:

Նազր-վազրն ի, կտիսնա որ խեղճ կնիկ ի, կասի. «Ձայիր կուզի էսւս մաղ տանի տա թաքավորին, պամ պաշխիշ 'առնի, խեղճ են, տանի իդյրով իտարա անեն»: Ամր կանի տռնապանի, կասի՝ թող, թո էրթա թաքավորի մոտ:

Պառավն ի, կառնի մաղ, կէրթա թաքւսվորի էօդի տռան վերեն, մւսղ կտնի տուս, ինքյ կմտնի ներս՝ թաքավորի էօդեն, գյլեոխ կուտա, ծեռ կտնի սոտին, կկայնի էնտեղ:

Թաքավորն ի, գյլեոխ մեյ խապ կվերուցի վեր, կտիսնա որ մեյ խապ պառավմ գյեռ կայնե յուր էօդի տռան մոտ: Կտառնա էսա պւսռվուն կասի. - Ի՞նչ ունես պառավ, ի՞նչ դարդ ունես, ասա տիսնամ խենքյ:

Պառավն ի, կասի. - Դարդ չունեմ, ես կուզիմ քյո ջանսաղութեն, մենակ մեյ դիլաքյ ունեմ քյեզնից, ուրիշ զատ չունեմ:

Թաքավորն ի, կասի. - Ի՞նչ ունես, ասա, տիսնամ:

Պառավն ի, քիչմ կթընգյմընգյա, կտառնա թաքավորին կասի. -

Թաքավոր ապրած կենա՛ս, ես իկեր իմ քյե մոտ խնամախոս, ես իկեր իմ քյո ախչիկ կուզեմ իմ լաճուն, էսա յի խնդիրքյ:

Թաքավորն ի, մեյ խապ կիրիշկա էսա պառվուն, կփիսնա որ էս էլ մեկելի պես աղքյապ ֆուկարա յի, մեյ խապ ինքյ ուր էլմ'էլ կծըծղա, կպառնա կասի. - Խսւ, պառավ, ես իմ ախչիկ կուտամ քյո լաճուն:

Խաթր չկոտրելու խամար կասի. - Ինչի՞ չէ, ինչ լաճ էլնի, որ մեկ ախչիկ չաժի: Համան տու զիկ էն ասա, պառավ, քյո լաճ ի՞նչ սմնմհմթ ունի, կանա՞ տուն պախե, վով կիտի խառցուցել ամոթ չէլնի, մարթ ի, ինիլ-կայնիլ կէլնի, էն մարթ որ սմնմհմթ չկիտե, տաս փարա չունե, պիտի սոն-սոն անութի մեռնի:

Պառավն ի, խետ որ թաքավորի պենիյ էսա խապար կլսի, համան կասի. - Խա, խա:

Կվազի տսիյ էտա մաղ կառնի կուգյա կուտա թաքավորին, կասի. - Այ տես, թաքավոր ապրած կենաս, իմ տղեն գյեո ըսկընա ոսկի սմնմհմթ ունի, մաղ գյոռծող ի, մեռնիմ ուր մատ-եղունգյին, կասես մուշապպաղ ի պւսնե:

Թաքաւվորն ի, կառնի մաղ, կփիսնա, կպառնա պառավուն կասի, - Աշապի բիլա որ քյո տղեն ոսկի սմնմհմթ ունի. այ, ի՞նչ ասես աժի էտասկընա տղեն:

Մորա կասի. - Տու էսօր կնա, ես մեյ խապ էլ կմտածեմ, քյե ջյուլյապ կուտամ չուր տըսվիրեք օր, տըսվիրեք օրիյ սորա թող քյո տղեն գյա, ջյուլյապ ինոր կուտամ, հաzր մեր տեսեն կփիսնանքյ:

Պառավն ի, ուրախ-ուրախ թռվռալեն կուգյա տուն: Իրիկուն լաճ որ կուգյա տուն, զմեն պան կպատմի՝ թե թաքավոր ինչխ խոսկ տվեյ:

Լաճն ի, որ կլսի մոր ասածներ, էլ ոտկեր գետին չառնե, գյեո ինքյ ուր թաքավորի տեսա կծախի զմենին:

Կընցնի մի քյանի օր: Մեկ օր էլ մեյ խապ ոսկրիչ լաճմ կկանչի ուր մոր, մեյ խապ խորոտ ախչեմ կշինի, կուտա ուր մոր, կասի. - Մարե՛, էսա ախչեն առ տար թակավորին ափիյա. Որ թաքավոր կասի. «Ի՞նչ կուզես, ասա՝ տամ, պառավ», տուն էլ վերու ասա. «Ես ի՞նչ պիտի ուզիմ, թաքավոր ապրած կենաս, ես քյո ջանի սաղութեն կուզիմ, ես քեզնիյ կուզիմ որ քյո ախչիկ տաս իմ լաճուն». ըսկընա ասա, տիսնանք խենքյ ի՞նչ կասի թաքավոր:

Էսա պառավն ի, կառնի էսա ախչեն, ի՞նչխ անի, չարնաչար կիտի, ուր խելքյ կխասնի, թե թաքավոր ինոր ախչիկ կուտա՞, համան ի՞նչ անի, պիտի տանի, լաճ շատ ի զոռե: Կառնի կէրթա: Կէրթա թաքավորի քյեոշկ-սարի դռան վերեն, կկայնի էնտեղ չուր նազր-վազր տիւս կէլնի սարիյ, կփիսնա էսա պառվուն, կասի. - Պառա՛վ, ի՞նչ կուզես:

Պառավն ի, կասի. - Քյե մեռնիմ, ես կուզիմ մեյ խապ թաքավորին տիսնամ:

Նազր-վազրն ի, կփիսնա որ խեղճ-մեղճ կնիկ ի, կասի. «Վով կիտի ի՞նչ դարտ ունի, թող էրթա թաքավորի մոտ, բալքյի մեյ պան կանի»:

Կփառնա դռնապանին կասի. - Թող թո էսա պառավ էրթա թաքավորի մոտ:

Պառավն ի, կէլնի կէրթա փողրի թաքավորի էօդի դռան առաճ: Էօդի դուռ կպանա, կմտնի ներս, գլեոխ կուտա, կկայնի դռան իտև:

Թաքավորն ի, մեյ խապ գլեոխ կվերուցի վեր. կփիսնա որ գլեո պառավմ կայնե դռան իտև. խետ կփիսնա, կասի. - Հա, ի՞նչ կուզիս պառավ, ասա փիսնամ խենքյ քյո դարդ ի՞նչ ի:

Պառավն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես քյո մոտ իկեր եմ, մեյ խնթիրքյ ունեմ, ինորից սորա քյո ջանի սաղութեն, թե չէ՝ ես ուրիշ դարդ չունեմ:

Թաքավորն ի, կասի. - Ասա փիսնամ խենքյ քյո խնթիրքյն ի՞նչ ի, պառավ:

Պառավն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, քյեզնից ի՞նչ պախեմ, ես իկեր եմ որ փու քյո ախչիկ փաս իմ լաճուն, էսա յի իմ խնթիրքյ, ուրիշ պան չունիմ:

Թաքավորն ի, մեյ խապ կիրիշկա էսա պառվու վերագլեոխ, կփիսնա որ խեղճ-մեղճ պան ի, ինքյ ուր կասի. «Էսա ի՞նչ պան ի, էսա չորս-խինգյ օրվան մեջ իրեքյ փեղից իմ ախչկան ուզող էկան, իրեքյն էլ էսասկընա խեղճ-մեղճ պան ին, զայիր մեր ախչըկան բախտ էսա յի»: Կասի, մեյ խապ կծծղա, կասի. - Պառավ, շատ խորոտ կէլնի, ես էլ կուզիմ վարիսալ իմ ախչիկ իրկան փամ:

Պառավն ի, կխանի ուր լաճու փված առծթե ախչեն կուտա թաքավորին, կասի. - Թաքավոր ապրած կենաս, առ էսա ախչեն քյո կընգյան խամար ափիյա յիմ պերե, կուզես փիր քյո ախչկան նշան:

Թաքավորն ի, կառնի էփա ախչեն, կիրիշկա որ էփեջա խորոտ պան ի: Էսա պառվուն կասի. - Պառավ, - կասի, - աղեկ, ես իմ ախչիկ փվի քյո լաճուն, քյո լաճ ի՞նչ սաննահաթ ունի, որ պանի՝ ապրին, ուրիշին մուխթեջ չինեն:

Պառավն ի, կասի. - Հու՜յ, իմ լաճ ըսկուն ոսկի սաննահաթ ունի, որ աշխրիս մեչ մեկ էլ ըսկուն չկա: Իմ լաճու սանահաթ ոսկրճութեն ի, էփա ախչեն իմ լաճու ծեռայ շենքյն ի, մեռնիմ ուր խունարին:

Թաքավորն ի, կասի. - Թե որ էփասկընա յի, ես իմ ախչիկ կուփամ քյո լաճուն: Համան չուր փաս օի, նոր քյե պատասխան կուփամ: Մեյ խապ էլ ես դանըշմիշ էլնիմ, ախչկանս մեյ խապ խառցուցեմ, փիսնամ խենքյ կամք կուփա, նոր փաս օրից սորա փու եւ մի գյա, թող քյո լաճ գյա, ինոր ջյույապ կուփամ, համ լաճն էլ կփիսնանքյ:

Պառավն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, իմ լաճ կալապ չունի, պան չունի, մե կտոր աչկեր շաշ-պեշ ի, մե կտոր էլ թոփալ ի, թե չէ ուրիշ կալապ չունի, գընփռիկ կլոր, խորոպ փղեմ ի:

Թակավորն ի, կասի. - Աղեկ, թող էն գյա, ավափա որ ինոր պան-ման կուփանքյ շինել:

Պառավն ի, կէլնի ուրախ-ուրախ կուգյա փուն:

Իրիկուն տղեն կուգյա տուն, կասի. - Հա, մարե, ի՞նչ արիր, թաքավոր ի՞նչ ասաց:

Կտիսնա, որ մերն էլ ուրախ ի:

Դառավն ի, կասի. - Դալամ, էլ ի՞նչ կուզիս, էլար թաքավորին տեսա: Թաքավոր խոսկ տվեց, ասաց. «Ի՞նչի չեմ իտա, ինորից ավել մարթու պիտի տա՞մ, մանավանդ որ խորոտ սանահաթ մ՛էլ ունի ծեռ»: Համան ասաց, որ՝ «Տաս օրից սորա թող քյո լաճ գյա, ինոր պատասխան կուտամ, մեյ խատ էլ իմ ախչկան դանըշմիշ էլնիմ»:

Լաճն ի, ուրախութնե ոտկեր էլ գյետին չառնե, ինքյ ուր կասի. «Գեռ էղա թաքավորի փեսա, պռծա»:

Թաքավոր մեյ խատ ինքյ ուր կմտածի կասի, էսա չորս-խինգյ օրվան մեջ էլավ իրեքյ տեղից ուր ախչկան ուզող կուգյա, բիթուն էլ աղքյտի տնե: Կկանչի ուր նազր-վազր, կասի. - Հալ-հեքիաթ, գյեռ իմ ախչկան իրեքյ տեղից ըսկընա տնե ուզող էկան, ի՞նչ անենքյ:

Նազր-վազրն ի, կասի. - Տու ի՞նչ ջյույապ տվիր, թաքավոր ապրած կենաս:

Թաքավորն ի, կասի. - Ես բիթունին էլ խոսկ տվի, ասի չուր տաս օր էտա իրեքյ փեսեքյն էլ թող գյան ըստեղ, ունենք պատասխան կուտամ:

Նազր-վազրն ի, կասի. - Շատ աղեկ արիր, չուր տաս օր թող գյան, տիսնանքյ խենքյ վո՞վ ին խոռնքյ. չէլավ, զմեն մեկին մեյ պան կուտանք, ճամխու կտնենքյ:

Թաքավոր ուր ախչկան էլ կասի, թե՝ ըսկընա իրեքյ տեղից քյե ուզող իկե:

Թաքավորի ախչիյն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, իտի կուզյան էտա փեսայութքյ, զիկ էլ կանչի տիսնամ խենքյ ի՞նչ քյեշիտ տղա են, բալքյի իմ սուտով էլավ մեկն, էն գյախ ես կառնեմ:

Տաս օրից սորա էսա փեսայութքյ բիթուն էլ կէրթան թաքավորի քյեռշկ-սարեն: Գյեռ թաքավորի էօդի մեչ շարվեր ին նազր-վազրներ, թաքավոր, ուր ախչիկ, տիսնանք խենքյ ի՞նչ պիտի անեն:

Էսա լաճերեց կառնին կպիրին թաքավորի էօդեն, խոնց ճեռյ-ճեռկ թաքավոր կխառոսուցի, կասի. «Տուքյ եք իմ ախչիկ ուզողնե՞ր»:

Թաքավորն ի, կասի. - Տուքյ, բիթունտ էլ սննահաթ ունեքյ, չէ՞:

Էսա լաճերն ի, կասին. - Խա:

Գյեռ զմեն մեկ ուր սննահաթ ինչ ի, կասի:

Թաքավորն ի, կասի. - Ես ծեր իրեքյի մորն էլ խոսկ տվեր եմ, որ իմ ախչիկ կուտամ ծեր լաճերաց, համան մըկա ես ի՞նչխ անեմ, կտիսնամ որ իրեքյտ էլ բաքագյիթ տղա եքյ, ես որ մեկիտ խոսկ տամ, որ մեկու խաթրն էլ չմնա, ասենքյ շատ ախչիկներ չունիմ, որ զըմեն մեկիտ մեյ խատ տամ: Իմ էլած-չէլած մեկ ախչիկ ի աշխրիս վերեն, էն էլ վի՞ր տամ, չեմ կանա կիսե էլ: Կանաքյ խելքյ խասուցեք ասեքյ, - կտառնա ուր նազր-վազրին կասի, - ի՞նչ խելքյ կխասուցես:

Նազր-վազիրն ի, կասի. - Աղորթ որ զմենից զոռ հաշիվն ի էսա:

Թաքավորի ախչիյն ի, կասի. - Քյանի որ իմ վերեն կփառնա էսա զմեն պան, թողեքյ զիկ՝ ես ինչխ կանեմ՝ կանեմ:

Թաքավորն ի, կասի. - Շատ աղեկ, փու կիտես, ախչիկս: Ի՞նչխ կուզիս՝ ըսկուն արա, կուզիս մեչից որն որ կուզիս ճեռկի. ասա՝ ես էսա լաճ առնիմ, քյանի որ քյո կամքյից կախված ի. որն որ քյո աչկ կպռնի. ինորն էլ ուզի, ես կասեմ իփորից զատ ուրիշ պան. էլ ճար-ճանպախ չկա:

Թաքավորի ախչիյն ի, կասի. - Չէ. ես ոչ մեկին էլ իմ ուզե. խաթր զիզնից մնա, ես մեյ պան կասիմ ինոնց. վով որ արայց իմ սռտով էլավ՝ ես ինոր կառնիմ:

Թաքավորն ի, կասի. - Պալամ, փու կիտես:

Ախչիյն ի, կասի. - Տու բաբազյիթ փղեյներ. փուքյ կասեքյ թե՝ մենքյ բիթունս էլ սանահաթ ունեքյ, չէ՞:

Էսա լաճերն ի, կասին՝ խա:

Թաքավորի ախչիյն ի, կասի. - Ի՞նչ սանահաթ ի ծեր սանահաթ, զիկ մեյ-մեկ ասեքյ:

Ոսկրիճն ի, կասի՝ ես ոսկրիճ եմ, մաղ շինող կասի՝ ես մաղ շինող եմ, կազունչին կասի՝ ես կազանչի եմ:

Թաքավորի ախչիկ կխանի զմեն մեկին փաս-փաս ոսկի կուփա, կասի. - Առեքյ էփա փաս ոսկին, փարեքյ զմեն մեկ թող իր սանահաթից մեկ պան շինի պիրի փիսնամ խենքյ ո՞րն ի խորոփ, վուրուն որ ես խավնա՝ ինորն էլ կուզիմ զիկ մարթ:

Թաքավորն ի, որ կլսի ուր ախըչկան խապրներ, կփիսնա որ խելքյից-մփքյից փուս պան էր, կպռնի ճակատ կսլազի, կասի. - Աշափի բիլա շատ խորոփ խելքյ էր:

Էսա լաճերն ի, կառնին էսա փասական ոսկին, փրփում-փխուր կէրթան փուն:

Էսա լաճեր որ կէրթան փուն, ուրենց մերեր գյեռ իսոնց կաչկին, կասին. «Գյան որ փիսնանք խենքյ ի՞նչ խապար կպիրին»: Որ կուգյան փուն, կխառսուսեն, կասեն. «Գյա փղա, ի՞նչխ էլավ»: Կփիսնան որ փխուր են, կասին՝ չէլնի՞ չէլավ. ինոքյ շատ կիտեն թե իրեքյ փեսայու են:

Լաճերն ի, հալ-հեքյաթ կպատմեն ուրենց մոր, թե իրեքյ խոգյի յինք, ուրիշ էրկու խատ էլ ուզող են իկե, իւրոր վերեն թաքավորի ախչիկ խանեց մե փասական ոսկի փվեց, ասաց. «Կընացեքյ, փուքյ իրեքյփ էլ սանահաթ ունեք, ծեր սանահաթից մեյ պան շինեքյ, պիրեքյ, վուրուն որ խորոփ էլավ, որ խավնա, ինոր կուզիմ զիկ մարթ»:

Իսռնց մերերն ի, կասին. - Ապա թաքավոր ծե ախչի՞կ կուփեր, գյեռ փաս ոսկի փվե, ծե ճամխու յի փրե:

Էսա լաճերն ի, կփիսնան որ ճար չկա, իրեքյն էլ ինգյեր են, կէլնին խոսկ կանին մեկ, կասին. - Էրթանքյ ուրիշ աշխար, պալքի մեր ուզած էնփեղ կընփընենքյ:

Կասին, կէլնին կինեն ճանպախ, կէրթան ուրիշ երկիր, կէրթան էփա երկրի մեչ զմեն մեկ ուր սննհւթ կանի:

Էսա ոսկրիճն ի, մեյ խափ առծըթիս խորոփ խայլիկի կող կշինի, խայլիկ մ'էլ կփնի մեչ, կասի. «Ես էսա պիփի փանեմ թաքավորի ախչկան»: Էրկու փարի վիր իփոր կպանի, չուր չեորով կշինի:

Մաղ գյոոծողն ի, կասի. «Ես էլ մեյ խափ շափ խորոփ ճոչ խալիմ պիփի շինեմ, ըսկուն խալի, որ աշխրիս մեչ իսկի չէլնի, փանեմ թաքավորի ախչկան, որ պերան մնա պւոյ, ծիկ ուզի»: Էսա մաղ գյոոծողն էլ խալիմ կգյոոծի, էն էլ չուր էրկու փարի չեորով կպոծնի:

Կուզյա էսա կազանչին կմփածի, կասի. «Ես ինչ շինեմ, որ թաքավորի ախչիկ իմուն խավնի, ես էլ, - կասի, - ես մեյ խափ պիփի խորոփ կափախմ շինիմ, ըսկուն խորոփ որ թաքավորի ախչիկ զմեն գյախ իփրով ճուր խմի»: Վարիասլ, էսա կազանչին էլ չո̈ւր էրկու փարի չեորեով կպոծնի:

Էսա իրեքյն էլ կաշխափին մեյ մեկելուց ալւն պան շինել, որ թաքավորի ախչիկ ուրենց խավնի:

Ի՞նչխ կէլնի, թաքավորի ախչիկ կխիվընփնա: Էլ ինչ կանդար որ խեքյիմ կպիրին, ֆայդա չանե, ճար չէլնե, չի ժրե, ըսկուն որ էրկու փարի խիվանդ կմնա:

Էսա իրեքյ ինգյերն ի,. ուրենց զմեն պան կշինին կպոծնին, մեկ օր կժողվոփին ուրենց էլած-չէլած որ էրթան ուրենց երկիր, ուրենց ափիյեքյ փանին թաքավորի ախչկան:

Կժողվոփվին որ պիփի ինեն ճանպախ էրթան, բիրդան էսա ոսկրիճն ի, կիրիշկւս ուր խայլիկի մեչ, կփիսնա որ խայլիկ ըսկուն շանց կուփա, մեչ կերևա գյեո թաքավորի ախչիկ գյեո խիվանփ, ըսկուն ծանդր ի, մեռնելու դարաջին: Կկանչի ուր էրկու ինգյերներաց, կասի. - Էկեքյ փիսիքյ, թաքավորի ախչիկ մեռնելու դարաջին խիվանփ ի, յա խասնինք, յա չխասնինք:

Էսա լաճերն ի, կուզյան կփիսնան որ աղորթմանց, թաքավորի ախչիկ գյեո խայլիկի մեչ ըսկուն կէրևա որ հա դեորմ ի, հա մկա: Կասին՝ ի՞նչխ անենքյ, ի՞նչխ չանենքյ:

Վարիասլ էփա ոսկրիճն ի, կասի. - Գյեո իմ մարյուֆաթ, իմ շինածի մարյուֆաթ էսա յի, փիւքյ ի՞նչ մարյուֆաթ ունեքյ, դե խոջեքյ, որ շոփ խասնինքյ, ախչիկ պալքյի ազափինք:

Էսա մաղ գյոոծողն ի, կասի. - Քյո խայլըկի մարյուֆաթ թաքավորի ախչիկ խիվանփ ի շանց փվեց, համան, - կասի, - իմ խալիկի մարյուֆաթն էլ կիփեքյ ի՞նչ ի, էն էլ որ վւռիմ վեր էսա ճամխին, աչկեր խփես, պանաս, կխասնենքյ մեր թաքավորի քյեոշկ-սարեն:

Էսա կազանչին էլ կասի. - Աղեկ, էնա որ խայլկով շանց իփուր, որ թաքավորի ախչիկ շափ ծանդր խիվանփ ի, մեռնելու դարաջին, փունն էլ խալին կփռիս, աչկ խփենքյ, պանանքյ, կխասնենքյ թաքավորի քյեոշկ-սարեն, քյո խալին էլ էփա մարյուֆաթ ունի, ադեկ: Համան որ

խասանքյ, էնտեղ ի՞նչ պիտի անենքյ որ թաքավորի ախչիկ ժրի: Մարյուֆաթ թաքավորի ախչիկ ժրըյույելու մեչն ի, - էսա կազանչին ի կասի, - իմ մարյուֆաթ ծեր էրկու պանիյ էլ աղեկ ի. ես էլ էսա իմ շինած կափխով խետ ճուր տամ թաքավորու ախչկան. թաքավորի ախչիկ կսաղանա, կէլնի վեր էնգյախ ինե: Իմուն չանքյ ծեր էրկսիտ շատ մարյուֆաթ ի, թաքավորի ախչիկ էնգյախ զիկ կառնի:

Էսա իրեքյ ինգյրներն ի, կպնին մեյ մեկելու:

Էն կասի, որ իմ խայլիկ չէլներ, տուքյ ի՞նչ կիտիքյ, որ թաքավորի ախչիկ խիվանտ էր, որ չտիսնինքյ պիտի մեռներ. իմու խայլկի մարյուֆաթ շատ ի:

Էն մեկել կասի. - Որ իմ խալին չէլնի, ի՞նչխ պիտի խասնեքյ. որ ժըըյույեքյ, իմ խալին որ չէլնի չուր քյառսուն օր չեքյ կանա խասնե քյաղաքյ, իմ խալու մարյուֆաթ ծեր էրկըսիյ դիա շատ ի, թաքավորի ախչիկ զիկ կխավնի, զիկ կառնի:

Վարիասլ էն ուր կգյեռվա, էն ուր կգյեռվա, էն ուր: Սորա կասին. - Մենքյ ի՞նչ կանենքյ ըստեղ, էրթանքյ քյանի թաքավորի ախչիկ սաղ ի, էրթանքյ էնտեղ, տիսնանքյ թաքավորի ախչիկ որուն որ խավնավ, ինոր թող ուզի: Մենքյ ըստեղ կռվենքյ, ֆայդա չանե, - կասին, - քյու խայլիկ շանց իտուր որ թաքավորի ախչիկ կայաթ խիվանտ ի, աղեկ, դե տուն էլ քյու խալին փռի, էրթանքյ շոտ խասնենքյ, ես էլ իմ կափխով ճուր կուտամ, թող ժրի էլնի վեր, որուն որ ասայ շատ մարյուֆաթ կա՝ թող ինոր առնի:

Էսա խալին կփռին, աղորթմանց աչկ խփոց գյախ խասան թաքավորի դռան առա̃ճ իրեքյն էլ:

Թաքավորին խա̃պա̃ր կտանին թե՝ քյո իրեքյ փեսայուքյ իկեր ին:

Թաքավորն ի, ամր կանի որ գյան ներս: Կէլնեն իրեքյն էլ կէրթան ներս, կտիսնան որ ա̃ղորթմանց, թաքավորի ախչիկ գյեռ մեռնելու դուռն ի:

Էսա կազանչին ի, ա̃լա̃ կխանի ուր կա̃փա̃խ, ճուր կլցի մեչ, կուտա էսա թաքավորի ախչկան, խետ էսա ախչիկ էտա ճուր կխմի, յավաշ-յավաշ խելքյ կուգյա վերեն, չի̃ր իրիկուն կէլնի սաղ-սելիմ, կկայնի էնտեղ:

Թաքավորն ի, խետ կտիսնա էտա լաճուն, կտիսնա ինոր մա̃րյուֆա̃թ, կասի. «Էսա լաճ արժեյ իմ ախչկան, մեյ մարթ չկառըյավ ժրյույեր իմ ախչկան, էսա լաճ իմ ախչիկ մեռնելույ ա̃զա̃տեյ, ժրըյույ, ինոր հա̃ծն ի իմ ախչիկ»:

Սորա կկանչի ուր նազր-վազրներ, ուր ախչիկ ինա̃ն էսա իրեքյ փեսայուքյ, որ տիսնան խենքյ ի՞նչ ին շինե, որ թաքավորի ախչիկ խավնի՝ ինորն էլ ուզի ուր մարթ:

Էսա կազանչին ի, կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, իմ շինած էսա կա̃փա̃խն ի, ինոր մա̃րյուֆա̃թ էն ի որ, վով խիվանտ էլնի, էսա կափխով ճուր խմի, կժրի, էլ պան չէլնե, ինչխ որ քյո ախչկան ժրյույ:

Մաղ շինողն էլ կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես էլ էսա խալին իմ գյոռծե, իսոր մարյուֆաթ էն ի որ, մարթ որտեղից որ կուզի, կուզի էսա աշխրի ծերից, խետ որ փռիս գյետին, աչկտ պանաս-խփես, որ տեղից որ ուզիս, քյո ուզած տեղ աչկ խփոց գյախ կխասնես: Ընկուն արինքյ, - էսա մաղ գյոռծող կասի, - որ մենքյ էսա երկրից էկանքյ ըստեղ, տեսանքյ որ քյո ախչիկ խիվանդ էր:

Թաքավորն ի, նազր-վազրներն ի, կասին. - Էս շատ մարյուֆաթ ի, էս էլ շատ խորոտ ի:

Թաքավորն ի, կտառնա դեխ էսա ոսկրճուն կասի. - Դալամ, տհւ ի՞նչ ես շինե:

Էսա ոսկրիճն ի, կասի. - Թաքավո՛ր ապրած կենաս, ես էլ շիներ իմ էսա խայլիկ, իսոր մարյուֆաթ կիտեքյ ի՞նչ ի, իսոր մարյուֆաթն ի, որ տնես, ջանտ ի՞նչ պան որ ուզի տիսնալ, ինչ կանդար որ զատ տեղ կէլնի թող էլնի, քյե շանց կուտա, մեչ կերևա: Ընկուն էլավ, որ մենքյ ուրիշ երկիր ինքյ, իրիշկայի, ասի. մեյ խատ տիսնամ թաքավորի ախչիկ: Ես իմ իրիշկալ տեսա. տեսա որ, թաքավոր ապրած կենաս, քյո ախչիկ խիվանտ, մեռնելու տուռ պառկեր էր, նոր խապար էօրեռխկեցի իսոնց ասի. էկեքյ, հալ-հեքյաթ թաքավորի ախչիկ էսն հալի մեչն ի, ինչխ անինքյ, ի՞նչխ չանինքյ, էկանք մեյտեղվանքյ:

Էսա խալի գյոռծողն ասաց. - Իմ խալին էլ էսա մարյուֆաթ ունի որ փռինքյ, աչկ խփոց գյախ, մե կխասուցի թաքավորի քյեռշկ-սարեն:

Իսկ էսա կազանչին էլ ասաց. - Ես էսասկնա կատախմ եմ շինե, խետ որ ինրով ճհւր տամ թաքավորի ախչկան, էնգյախ ինե կժրի: Էտըսկնա էնա ուր խալին փռեց, շոտմ էկանքյ, ես էլ ուր կատխով ճուր իտուր քյո ախչիկ խմավ, աղորթմանց ժրավ: Ակա մեր շինածներ իսոնքյ ին, տհւք կարար տվեք, խենքյ որն ի շատ մարյուֆաթ:

Թաքավորն ի, կասի, ուր ախչիյն ի ինան ուր նազր-վազրներն ին, մուզաքյարա կանեն, կարար կուտան, որ իրեքյն էլ խավասար վոժ ունեն, թե որ մեկն չէլներ, էն մեկել չէր էլնի, թե որ էն մեկել չէլներ, էն մեկել չէր էլնի, թե որ էն մեկել չէլներ, էն մեկել չէր էլնի: Իտոր վերեն կարար կուտան, որ էսա իրեքյն էլ մեկ վոժ ունեն, իսոնքյ իրեքյն էլ խավասար ին:

Սորա թաքավորի ախչիկ կուգյա կասի. - Քյանի որ տուքյ իրեքտ էլ զիկ յարամիշ եք էլե, ես էլ չեմ կիտե ի՞նչխ ծեր աղեկութնից էլնեմ, որ իրեքյտ էլ չէլնիքյ, ես մկա շոտուց մեռեր ի, ես վուրո՞տ առնիմ, վուրո՞տ թողնիմ: Մեկուն որ առնիմ, էն մեկելներաց խաթր պիտի մնա: Ավելի աղեյ կէլնի որ մեյ-մեկելու խաթր չմնա, ես ծե կանեմ զիկ ախպեր, ես զաթի ախպեր էլ չունեմ, ես էլ ծե քյեոր:

Էսա լաճերն ին, էլ ի՞նչ կանան անե, թաքավորի ամրն ի, կասին. - Աղեկ, թաքավոր ապրած կիտի:

Էսա լաճեր կէլնեն թաքավորի տղա, սորա կէօրեռխկեն ուրենց մերերն էլ կպիրին ուրենց մոտ, էտասկընա կապրին քաղցր վ'անուշ:

Ավուր մեկ մեյ խատ խովիվմ էսա թաքավորի ախչկան ուզող կէլնի:

Էստ հովըվի անուն Հովո կէլնի, ուր պան-գյոռծ փարի փըսվերկու ամիս հա ոչխար արածալն ի:
Ինքյ մեկ օր ոչխըրներ որ կփանի փաշփ, ոչխըրներ կթողնի ուրենց քյեռթեն, կուգյա ըռդեխ քյար-մար կժողվի, ուր խամար ժամ կշինի փաշփի մեչ, կկայնի էփա փեղ աղոթք կանի: Ամեն օր էփասկըռնա կանի, կդառնա կուգյա, կնսփի մեկ օր վեր մեյ խափ քյարիմ, ուր հալ-վախփի վերեն կմփածի, կասի. «Էստ ի՞նչ հալ ի. փարին փըսվերկու ամիս հա էստ ոչխըրներ կիսկեմ առաձս, կուգյամ փաշփ. հա ինչխ որ կանիմ, ճոթ-ճոթի չիմ կսնաս կպուշե. հա էսս խեղճն իմ. հա էսս աղքյափն իմ, ի՞նչ կխասկըռնամ էստ հալիս, բալե մեյ դան կուշփ փորով խաց ուփի՝ էն էլ մեյ պան էր»:
Հովոն ի, գյեռ ուր հալից գյանգյափ կանի հա, կասի կդառնա ինքյ ուր. «Մարթ մեյ խափ, - կասի, - էլներ թաքավորի փեսա, ջանյնամ ի՞նչ կէլներ՝ թող էլներ, մեկ-էրկու փարի խորոփ կյանքյ կաներ, թող նոր մեռներ»: Գյեռ էփասկըռնա կասի, հա ախ-վախի մեչ ի: Կփիսնա էն թարաֆից մեյ խափ պառավ սիվփակ մսրթմ, փեփ ծեռ կուկուզ-կուկուզ կուգյա դեխ էստ խովիվ: Կուգյա, կուգյա էստ Հովոյի մոփ, կասի. - Էյ պալամ, - կասի, - ի՞նչ դարփ ունես:
Հովոն ի, կասի. - Ի՞նչ դարփ պիփի էլնի, բաբալը:
Էստ խալիվորն ի, կասի. - Չէ, քիչ առաճ ի՞նչ կասիր էլնեմ:
Հովոն ի մեյ խափ կմփածի ինքյ ուր կասի. ես ի՞նչ իմ ասե. նոր կինի ֆանկուն, թե ինքյ ասաց. «Ու՞ր էր, որ մեյ խափ ես էլնի թաքավորի փեսա, մեյ խափ օր ասփվոր անի, նոր թող մեռնի, - համան կասի, - էստ խալիվոր որփեղից իմցավ որ ես էսասկըռնա պան իմ ասե, - կասի, - չէ, ես իսորից չիմ կանա պախե»:
Կասի. - Բաբալը, կիփես ես ի՞նչ ասի, թմախ ինգյա ուրիշներաց, ասի՝ ես էստ յաշին խասեր իմ, փարին փըսվերկու ամիս հա էսս ոչխըրներ կարածամ, իսկի չէլավ որ կուշփ փորով խաց էլ ուփի բարե, ինոր խամար թմախ ինգյա, ասի՝ ջանյնամ ի՞նչ կէլնի կէլնի, մեյ խափ էլնի թաքավորին փեսա, մեկ-էրկու փարի կյանքյ անի, նոր թող մեռնի: Էստ իմ ուզե, ուրիշ պան չէ:
Էստ խալիվորն ի, կասի. - Աղորթ որ ճիշփ ասիր, էփա յիր ասեր քիչմ առաճ, - կասի, - փու կուզիս որ էլնիս թաքավորին փեսա:
Էստ Հովոն ի, կասի. - Ինչի՞ չէ, որ էլնի, վո՞վ չուզե էլնի թաքավորին փեսա:
Խալիվորն ի, կասի. - Որ կուզես էլնել թաքավորին փեսա, կնաս պիտի ուզի թաքավորից ուր ախչիկ, թաքավոր կուփա:
Հովոն ի, կասի. - Տու ի՞նչ խապար կուփաս, բաբալը, թաքավոր զիկ ախչիկ կուփա՞, իմ ի՞նչ պանին ախչիկ կուփա, իմ զանգյնութնի՞ն, իմ ի՞նչ պանին:
Խալիվորն ի, կասի. - Քյո ի՞նչ պան ի, ես կխաջոխսցուցեմ, թե որ սիրփ ունիս, ասա:
Հովոն ի, կասի. - Բաբալը, որ էլնի, ինչի՞ չէ, վով չուզե:

Էսա խալիվորն ի, կասի. - Դե էրթանքյ, ես կկայնիմ քիչմ զատ, փռ̈ կկանչես թաքավորին: Որ կուգյա կասի, ի՞նչ կուզես, ասա. թաքավոր ապրած կենաս, իկիր իմ քյո ախչիկ կուզիմ: Սորա թաքավոր քյե ինչ որ կասի, թյեզնից ինչ որ կուզի, չէլնի ասես, թե՝ չէ, չեմ կանա, յա չունեմ: Ինչ որ կասի, ասա՝ խա, կանամ:

Հովոն ի, կասի. «Ջայնամ կէրթամ, փիսնամ խենքյ ինչ կէլնի»: Կէլնի, խետ էսա խալիվորին կէրթան թաքավորի քյեռշկ-սարեն: Կէրթան որ կխասնին, էսա խալիվոր կկայնի զատամանց կիրիշկա, փիսնա խենքյ էսա լաճ ի՞նչ կանի, կէլնի:

Հովոն ի, կէրթա թաքավորի փռան վերեն, փռնապանին կասի. - Կնա թաքավորին ասա, թող գյա վեր փռան, պան կասիմ:

Տնապան ի, կէրթա թաքավորին կասի. - Թաքավոր ապրած կենաս, մեյ խատ խեղճ մարթմ իկե վեր փռան, կասի՝ թաքավորին ասա գյա, պան կասիմ:

Թաքավորն ի, կպարկանա, կասի. - Էտա վո՞վ ի որ կասի՝ արի վեր փռան, պան կասիմ, չի գյա վերն էլ, - կասի, կդառնա կասի, - էրթամ փիսնամ խենքյ վո՞վ ի:

Թաքավորն ի, պարկոտ-պարկոտ կէլնի կուգյա փռան վերեն, կփիսնա մեյ խատ խեղճ մարթմ, կասի. - Վո՞վ ի զիկ կանչող:

Հովոն ի, կասի. - Ես եմ, թաքավոր ապրած կենաս:

Թաքավոր որ կփիսնա էսա խովվուն խեղճ կըտոտված խալվներով, ուր պարկությնից կէճնի, կասի. - Ի՞նչ կուզիս, պալամ:

Հովոն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես իկեր իմ քյո ախչիկ կուզեմ զիկ խամար, ի՞նչ կասես:

Թաքավորն ի, մեյ խատ կիրիշկա էսա խովվու վերազյլեռխ, կփիսնա որ շորեր ոռի վերեն չի դադրե, ծաղր կփռթնի, կասի. - Պալամ, քյո ինչի՞ն փամ իմ ախչիկ:

Կա՜ինքյ ուր. «Զայիր էսա լաճի փախտակ պակաս ի»: Կխանի ութ-տաս խատ ոսկի կուտա, կասի. - Դե առ կնա, էլ չիգյաս էսա դուռրրներ:

Էսա Հովոն ի, կասի. - Չէ, թաքավոր ապրած կենաս, զիկ ոսկի լազմ չի, ես ոսկի շատ ունիմ, փռ̈ իմ վերաձյլեռխ մ'իրիշկա, ես մենակ քյո ախչիկ կուզեմ:

Թաքավորն ի, կփիսնա, որ խոռր ձեռնից չի կանա փռթնե, կասի. - Պալամ, քյե մեյ պա̈ն պիտի ասեմ, թե որ արիր՝ զաթի իմ ախչիկ խալալ ի քյե, - կասի, - քյե իրեքյ օր ժամանակ, ես զաթի յոթ խատ էօղ̈ ունեմ դ̈ռտակ, թե որ էտա իրեքյ օրվան մեչ յոթ էօղեն էլ ոսկով լցիր, զաթի իմ ախչիկ քյե խալալ ի: Դե կնա̈:

Հովոյին ճամխու կդնի:

Հովոն ի, կէլնի կուգյա, ճանպա̈խ ինքյ ուր կմտածի, կասի. «Ես ի՞նչ խալթ արի, էն տաս ոսկին չառի, ջայնամ, ի՞նչ իմ պա̈ն ի էրթա̈լ թաքավորի ախչիկ ուզել, ես որտեղից ինոր յոթ էօղեն ոսկով լցեմ»:

Գյետ էփասկընա կմփածի, կուգյա կփիսնա որ խալիվոր էնփեղ կայնե:
Խալիվորն ի, կխառյուցի, կասի. - Ի՞նչ ասայ քյե թաքավոր:
Հովոն ի, կասի. - «Կուփամ, համան զիկ յոթ էօդա կա՝ դառփակ. քյե իրեքյ օր ժամանակ, եփ էփա իրեքյ օրվան մեջ լցիր. իմ ախչիկ քյե խալալ ի, իմ ախչիկ կուփամ քյե»: Ես էլ ասի՝ աղեկ. էփ էլ պա՞ն ի. որ կուզես:
Խալիվորն ի, կասի. - Աղեկ ես արե որ ասել ես՝ էփ էլ պան ի: Համան իրեքյ օր շափ ի, կնա ասա թաքավորին. թե իրեքյ օր շափ ի. մեկ օր խերիքյ ի:
Հովոն ի, կէլնի կերթա էլմ'էլ թաքավորին կկանչի վեր փռան, կասի. - Թաքավոր ապրած կենաս, իրեքյ օր շափ ի, մեկ օր խերլիքյ ի:
Թաքավոր որ պարկոփ-պարկոփ կէճնի փակ. կուգյա կփիսնա որ էսա լաճն ի, էլ վերեն չի դնե, կասի. - Ավելի աղեկ, մեկ օր թող էլնի:
Կխանի էփա յոթ էօդի պալնըներ, կուփա Հովոյին, կասի. - Առ էսա պալնըներ, որ փանես լցես էօդեքյ:
Հովոն ի, կառնի պալնըներ, կուգյա էլած-չէլած խալիվորուն կպափմի:
Թաքավորն էլ ուր նազր-վազըրնիրույ կասի. - Ջանըմ. էսա ի՞նչ պան ի, ինչ կանդար որ աղքյափ պըլընկած մարթ կա, կուգյա իմ ախչիկ կուզի, մեյ խափ շենշիփակ մարթ չկա ուզող:
Խալիվորն ի; Հովոյին կասի. - Մառախ մի անե, փի̈ւ կնա խանգյիսփ քյո փեղ քյնի: Առափուն կէլնես վեր, կերթաս կփիսնաս որ ա̈ղորթմանց, էփա յոթ էօդեն էլ ոսկով լցվեր ի:
Առափուն ի, Հովոն կէլնի յոթ պալնըներ կառնի, կերթա կմփնի թաքավորի սարեն, կերթա յոթ էօդեքյ կպանա, կփիսնա որ աղորթմանց րիթի̈ւն էլ լամելամ լցուկ են: Կէրթա̈ թաքավորին կկանչի, թաքավոր կէլնի կուգյա:
Հովոն ի, թաքավորուն կառնի կէրթա̈, որ էփա էօդեքյ պանա, կասի. - Թաքավոր ապրած կենաս, առ փի̈ւ քյո ծեռնով պայց:
Թաքավորն ի, կառնի պա̈լընըներ որ պիփի պա̈նա̈, կփիսնա որ չի պայցվե, ըսկուն որ լցուկ ի: Թաքավոր կփիսնա որ աղորթմանց ըսկուն որ լցուկ ի, որ չի կանա պա̈նա̈, կասի. - Պալամ, - կասի, - ինչի էսականդար իլին կլցիր, թող քիչ դառփակ էլներ, որ էսա դուռ խանգյիսփ պա̈յցվեր:
Հովոն ի, կասի. - Չէ, թաքավոր ապրած կենաս, իմ զմեն պա̈ն ըսկուն ի, պիփի լա̈մե-լա̈մ էլնի:
Թաքավորն ի, որ կփիսնա էսա ոսկու շեղքյեր փղին կասի. - Քյո մոփ էսասկընա մարյուֆա̈թ կա, ես իմ ախչիկ փվի քյե, քյո զա̈նգյնութեն իմնից էլ շափ ի:
Էսա Հովոն ի, կուգյա էսա խալիվորին զմեն պա̈ն կասի:
Խալիվորն ի, կասի. - Էն որ քյո ուզած էլա̈վ, համան ես քյե մեյ նա̈յա̈թ կուփամ, չէլնի որ էփա նայաթ մփկիցփ խանես, - կասի, - ինչ որ կանես, անելույ ա̈ռա̈ճ միշփ զիկ հիշաս: Չէլնի որ մփկիցփ խանես, հա՞:

Կասի, մնացիր պարի կասի, կինի ուր ճամպախ կէրթա:

Հովոն ի, զմեն գյախ ինչ որ աներ, էսա խալիվորու անուն կի'իշեր, ըսկուն որ ուր պան շատ աճող կէլներ:

Գյանքյ էսա թաքավորուն: Թաքավոր ինչխ որ խոսկ տվեց, ուր ախչիկ, աղորթմանց իտուր էսա խովվուն: Յոթ օր, յոթ կիշեր խարսնիս արաց, Հովոյին իպե ուր տուն, արաց տըմփեսա:

Հովոն ի, որ ինգյավ մեչ էսա փառքյին, էլ նա խալիվոր, նա մալիվոր, էլ իսկի մտկեն չէկավ: Էն առճի իրիկուն որ խետ թաքավորի ախչկան պիտի գյան մեյտրա, իսկի մտկին չպիրեց:

Խալիվորն ի, կիմնա որ էսա լաճ ինքյ ուր միտ չի պերե, չիւր կես կիշեր կաչկի, կասի՝ բալքյի մեղա գյա: կտիսնա որ հեչ իսկի էն տեխեր չի էլնե: Կես կիշրին էսա լաճուն ուր տեղաց մեչեն կխանի, կտանի կտնի էլմ'էլ ուր խին անվերի-վերի տան մեչ, էլմ'էլ էն պատռտած ճւթերաց մեչ:

Հովոն ի, առատուն որ կարթնա, կտիսնա որ ի՞նչ. ի՞նչ թաքավորի տուն, ի՞նչ պան, էլմ'էլ ուր խին տան մեչն ի: Կասի՝ էսա էրա՞զ ի, ի՞նչ ի: Բիրդան խելքյի կուգյա, կասի. «Հա, իմցա, էսա էլմ'էլ խալիվորի արածն ի, խալիվոր զիկ ասաց՝ ինչ պան որ կանես, ինչ պանի որ ծեռ կթալես, զիկ հ'իշա, նոր արա. ես էն առճի իրիկուն ինոր մոռցա հ'իշելու, ինոր խամար էսա ոդիեն. իմ գյլեոխ իպե»:

Ի՞նչ անի, էլ ճար չկա, ծեռ էլմ'էլ առճի թաս, առճի համամ: Էլմ'էլ ուր ոչխրներ կէրթա կկընտըռնի, կիսկի առաճ, կտանի տաշտ արածալ: Կէրթա էլմ'էլ տաշտ, քյար-մար կժողվի, ժամ կշինի ուր խամար աղոթկ կանի:

Թաքավորի ախչիյն էլ որ առատուն կէլնի վեր, կտիսնա որ նա մարթ կա, նա պան, մարթ չկա:

Թաքավորն ի, կտիսնա որ ուր վւեսեն չկա, կկանչի ախչկան, կասի. - Պւսլամ, մարթտ ո՞ր տեղն ի է:

Ախչիկն ի, կասի. - Չեմ կիտե, թաքավոր ապրած կենաս, կասես թե խավքյ էր, էկավ, թռավ կնաց:

Ախչիկ տղով կէլնի, չիւր մեյ տարի մեյ խատ լաճ կէլնի: Էսա տղեն կէլնի չուր իրեքյ տարեկան կիշեր-ցերեկ հա վեր մեյ խանգյի կուլա-կուլա. ճար չկա ծեն կտրելու:

Էսա Հովոն ի, որ զմեն օր կէրթա դաշտ, էտա ուր շինած ժամու մեչ աղոթկ կանի: Էն մեկ օր մեյ խատ խալիվորմ էն յանից էլմ'էլ կուկուզ-կուկուզ կուգյա, էսա խովվու մոտ կնստի, կասի. «Ի՞նչխ ես ի՞նչխ չես»: Կքաշլայի իտոր հալ-վախթից խառոցուցել:

Էսա խովիվն ի, կասի. - Ի՞նչխ պիտի էլնի, ռանգյի կապրենքյ:

Խալիվորն ի, կասի. - Ի՞նչի էտասկրնա խեղճ կապրիս, ես կիտեմ քյե մեյ խատ առանց կար շապիքյ կա, էն քյե լայեղ չի, էն թաքավորու լայեղ պան ի: Տար թաքավորին, քյե բեոլ փարա կուտա, պե խըռջի, էտասկընա խեղճ մի մնա:

Հովոյի խելքյին կինի էսա պան, էն մեկել օր կուտա մոր. կասի. - Մարե՛, առ էսա փար ծախի թաքավորուն. փարեն պե խըռօենքյ:

Մերն ի, կառնի էտա շապիքյ, կէրթա թաքավորու դռան վերեն. կմտնի ներս, խետ որ կմտնի ներս, թաքավորի ախչկան փղեն որ էսա ի։րեքյ փարի էր կիշեր-ցերեկ վեր մեկ խանգյի կուլեր. խետ որ էսա կնիկ կմտնի ներս, էսա փղի ծեն բիրդուն կկտրի:

Թաքավորի ախչիկ խետ կփիսնա որ էսա կնիկ ներս մտավ. փղի ծեն կտրավ, էսա կըռնգյան կասի. - Մարիկ մամիկ. էսօր արե կայ մեր տան, մ'էրթա:

Էտա փղեն համ լալույ կկտրի, համ կէլնի ուր ոտնով կուգյա դեխ էսա կնիկ:

Հովոյի մերն ի, կասի. - Չէ, չեմ կանա մնա. տուն մարթ չկա:

Մորա կխանի ըռնթի տկեն էտա անկար շապիքյ, կասի. - Էսա չե՞քյ առնե, առեքյ քանիմ կուռուշ փարա տվեքյ խռջենքյ:

Թաքավորի ախչիկ խետ կփիսնա էսա շապիքյ, կճանչնա որ ուր մարթու շապիքյն էր, էն տեսակ շապիքյ զաթի էրկու խատ էր վեր աշխրիս իրիսին, էն էլ էն խալիվորի մարյուֆաթովն էլ պերե Հովոն մեկ ուր, էն մեկն էլ ուր կըռնգյան: Խետ կփիսնա էսա շապիքյ, կասի. - Էսրա տեր վո՞վ ի...

Պառավն ի, կասի. - Իմ լաճն ի իտոր տեր:

Ախչիկն ի, կասի. - Դե՞որ ի մկա քյո լաճ:

Պառավն ի, կասի. - Էլմ'էլ ուր պանին ի, ինքյ խովիվ ի, ոչխար կպախի:

Ախչիյն ի, էտա պառվուն կպախի ուր մոտ, իրիկուն կէլնի մեյ խատ մարթմ կէօրեռխկի Հովոյին կկանչի:

Հովոն ի, որ կէլնի գյալու էտա խալիվորն էլմ'էլ ճամպախ Հովոյին ըռաստ կուգյա, կասի. - Ա՜յ տղա, - կասի, - ես էլմ էն եմ, ես էն խալիվորն եմ, էսօր էլ կասեմ քյե, էն մեկ անքամ քյե ջաբա, որ ինչ պան որ կանես, էն պանիյ առած զիկ հ'իշա, նոր սկսի պանիտ:

Կասի էսա խալիվոր, բիրդուն կկուրիսի:

Հովոն ի, կէլնի կուգյա թաքավորի մոտ, հալ-հեքյաթ կպատմի թաքավորին:

Թաքավորի ախչիկ նոր կուրախնա վեր ուր մարթուն: Էն օրվնիյ սորա թաքավորի ախչկան փղի լայ էլ մարթ չի լսե:

Հովոն ի, խոռիյ սորա ինչ պան որ աներ, խալիվորի անուն առած կհ'իշեր: